

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

48503

14.



796.4

4-98

796.4
4-98

40202-աւ.

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք-

№ 1. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1.

Թ Ե Թ Ե Վ Ա Տ Լ Ե Տ Ի Վ Ա

Պ Ր Ա Վ Ի.

Վ Ա Զ Բ

Խմբագրությամբ Մ. Վ. ՇԻՄԿԵՎԻՉԻ



Տեկտո՝ Ի. Գ. Կուտեյնիկովի. նկարներ՝ Մ. Ս. Յազուժինսկու
ԹԱՐԳՄԱՆՎԱԾ Ե ԲՆԱԳՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Հրատարակություն Հայաստանի Ֆիզկուլտուրայի Գերագույն Խորհրդի
1925 թ. Ցեբեվան

2011

2004

(15700-57)

24172-60

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ցեղես
Նախաբան	3
Վազք	7
Կարճ հեռակայութեան վազք	8
Միջին հեռակայութեան վազք	14
Յերկար հեռակայութեան վազք	16
Արգելավազք	18
Եստաֆեայան վազք	21
Նախապատրաստական վարժութիւններ վազքի համար	22

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սպորտը տարրերային կերպով դարգանում է բանվոր և աշխատավոր յերիտասարգութեան լայն խավերում: Մեր յերիտասարգութիւնը ճիշտ և գիտակցարար Ֆիզիկուլտուրայի մեջ փնտռում է այլասեռման դեմ պայքարելու իրական միջոցները մեկը, այլասեռում, վոր բանվորների և գյուղացիների իշխանութեան որոք անգամ շարունակում է սպառնալ պրոլետարիատին: Վերջնական հաղթանակն այս ճակատում ևս ապահովված կը լինի միայն համաշխարհային սոցիալիստական հեղափոխութեամբ: Բայց մինչ այդ պրոլետարիատն ոգտագործում է պայքարի բոլոր ուսուլ և առողջ միջոցները: և պարզ է, վոր ԽՍՀՄ-ում՝ պրոլետարիատի գիկտատուրայի որոք, մեր յերիտասարգութիւնն անհամեմատ ավելի լավ պայմաններում է գտնվում քան բուրժուական պետութիւնների յերիտասարգ բանվորութիւնը:

Սպորտի ամենասիրված տեսակներից մեկը, վոր գործադրում է մեր յերիտասարգութիւնը, հանդիսանում է այսպես կոչվող թեթև ատլետիկան: Թեթև ատլետիկայի վարժութիւններն իրենց հիմքում ունեն մարզու-

րնական շարժումները, ինչով և տարբերվում են իրենց ոգտակարությամբ մյուս բոլոր մարդական և սպորտային վարժություններից: Թեթև ատլետիկ վարժությունները, յեթե նրանք տարվում են ճիշտ և մեթոդիկորեն, աղաճովում են մարմնի բազմակողմանի ու համաչափ Ֆիզիքական զարգացումը, վորը դժվար թե ձեռք բերվի սպորտի մյուս տեսակների միջոցով: Իհարկե այստեղ ել հնարավոր է նեղ մասնագիտացումը, վորն ինքնըստինքյան բուրժուական սպորտից մեղ ժառանգություն մնացած վտանգավոր թեքումներից մեկն է: Յեվ պրոլետարական առողջ բարոյականությունը կը պայքարի դրա դեմ: Մենք իհարկե դեմ չենք այս կամ այն ոեկորդին, վոր անհատական և կոլլեկտիվ զարգացման աստիճանն են ցույց տալիս, բայց մենք դեմ ենք ոեկորդին վորպես նպատակի, դեմ ենք ոեկորդին, վորն ընդհանուր՝ առողջ ու համաչափ զարգացման փոխարեն, ստեղծում է վատառողջ միջոցառում և տանում դեպի նեղ մասնագիտացում:

Յուրաքանչյուր Ֆիզիքական վարժություն, յեթե նա սխալ կատարվի, յավազույն դեպքում՝ անոգտակար է, իսկ վատթարազույն դեպքում՝ վնասում է որդանիզմին: Այդ մասին, կարծում ենք զիտեն բոլորը: Սակայն դեռ բոլորը չեն ձգտում սովորել ուրիշների փորձի միջոցով նպատակահարմար ձանաչված սպորտ վարժությունները, այլ գերադասում են վարժությունները կատարել ըստ իրենց ուզածին, ստեղծելով իրենց տեխնիկան, իրենց սեփական «ոտիլը» (վոճը): Դժբաղդարար, այս հիվանդությունով տառաջում են մեր ա-

ռաջնակարգ սպորտսմենները և վորի հետևանքով հաճախ կրճատվում է նրանց աշխատանքի արդյունքները: Վորոչ դպրոցի (սիստեմի) բացակայությունը հատկապես վատ է անդրադառնում սկսնակների վրա: Մեր Ֆիզիկուլտի բլիշներում, խմբակներում, հատկապես գործարաններում և զինվորական մասերում փորձված հրահանգիչների սուր պահանջ է զգացվում: Մեծազույն դեպքում այդ ընկերների ունեցած մանկավարժական փորձառությունն ընդգրկում է միայն վորեւե նեղ ասպարեզ, որինակ՝ վորեւե մարդական սիստեմ կամ սպորտի վորեւե տեսակ: Նրանք բազմակողմանի զարգացած սպորտսմեն-մանկավարժ լինել չեն կարող, վորը ԽՍՀՄ-ում ու կարմիր Բանակում, մեր ազգասության և սպորտի յայն տարածման պայմաններում, Ֆիզիկուլտուրայի ամբողջ գործի համար ներկայացնում է խոչոր և վտանգավոր բաց:

Կասկածից դուրս է, վոր կարճ ժամանակվա ընթացքում մենք այդ բացը վերացնել չենք կարող. ուստի այդ աննորմալ վիճակից դուրս գալու միակ յեղքն է հանդիսանում այն, վոր մեր յերիտասարդության ուշադրությունը կը դարձնենք անհրաժեշտ գրքերի և պահանջվող զեկավարության վրա:

Տվյալ դեպքում մեր նպատակն է յայն կերպով մասսայականացնել թեթև աստեղիկ սպորտի տեխնիկան, վորը կարծես թե մինչև հիմա հաղխանում էր սպորտ հրահանգիչների և գասատունների մեղաշնորհ գաղտնիքը: Ինչպես

հայտնի չէ, թեթև ատլետիկ սպորտի տեխնիկան այնքան էլ պարզ չէ, ինչ-պես թվում է կողքից նայողին: Որինակ՝ ինչ է սպորտային վազքը: Վազելի հարող է յուրաքանչյուրը, բայց չիմանալով սպորտային վազքի կանոնները, վոչ վոք վազքի ժամանակ ամբողջութեամբ չի կարող սպտագործել իր ուժերն ու հնարավորութիւնները, յեթե նույնիսկ նա սկսի կանոնավոր մարզվել: Դեռ ավելին, տեխնիկան չիմանալով հանդերձ մարզվելու դեպքում, յեթե միայն պատահամբ և բնականորեն չզանվի անհրաժեշտ ստիլը, կարելի չէ հասնել շատ ցավալի հետևանքների, վորոնց վերացնելն այնքան է հեշտ չէ: Անպետք «ստիլը» կարող է մարմնանալ սկսնակի մեջ և սկսնակ կատարած սխալներն ավելի ուժեղ են արտացոլվում նրա աշխատանքները մեջ, քան հետագայի այս կամ այն թեքումը, յերբ տարրական ճիշտ տեխնիկան արդեն յուրացված է:

Ժամանակակից թեթև ատլետիկ սպորտի համարյա յուրաքանչյուր վարժութիւններում, ատանձնապես նետումների և ցատկումների մեջ գոյութիւն ունեն կատարելագործված և յայն տարածված մի քանի ստիլներ լինեք տալիս ենք ավելի նպատակահարմար և ոգտակար ստիլները:

Ներկա հրատարակութիւնը հանդիսանում է զուտ տեխնիկական հրատարակութիւն: Հետագայում կը հրատարակվի թեթև ատլետիկայի լրի

ձեռնարկ, վորի միջոցով սպորտամեները հնարավորութիւն կունենան բավարարելու վոչ միայն իրենց տեխնիկական այլև մյուս բոլոր պահանջները:
Մ. ՇԻՄԿԵՎԻՉ

Վ Ա Ձ Ք

Ատլետիկ վազքը բաժանվում է յերեք տեսակի՝ արագ, արագացրած և դանդաղ: Վերոհիշյալ յուրաքանչյուր տեսակն ունի իր ստիլը: Ստիլը վորոչվում է տարբեր հեռակայութեան վազքի արագութեամբ: Վերոհիշյալ պայմաններից յերկրորդ մշակվել են վազքի բնորոշ ստիլները—կարճ կամ սպրինտերական, միջին կամ միտուելտրեկերական, յերկար կամ ստայերկան: Բոլոր ստիլները մի ընդհանուր հիմք ունեն: Յուրաքանչյուր ճիշտ վազք, անկախ հեռակայութեանից, պետք է ընթանա մի ուղիղ գծով, վորը կը հաջողվի յեթև վոտքի ներքանները (վոտքի տակերը) համապատասխան կերպով դեանին զրովի: Ներքանները հարկավոր է դնել ծայրերը դեպի ներս ոյնպես, վորպեսզի մնացած հեռքը մի ուղիղ գծի վրա լինի: Վազքին ուղղութիւն է տալիս ազդր-սրունդը: Առաջ մղումը կատարվում է վոտքերով վազքի ոզգութեամբ: Հիշյալ կանոնները խստաբար զեպքում վազքը սխալ

և կատարվում, վորն և առաջ և բերում են երգիչայի ավելորդ վատնում :
 վազքի ժամանակ ձեռքերը պահպանում են մարմնի հավասարակշռությունն
 և ողնում վրտքերի աշխատանքներին նրանց հրման ժամանակ : Ձեռքերը
 մատնանշած դերը կատարում են վազողի մարմնի այն կողմից, վոր կողմի
 վրտքը այդ վարկյանին կատարում է հրումը : Ատլետիկ վազքի ժամանակ
 իրանն ունենալու յե վազքի արագության համեմատ թեքում : Վորքան արագ
 է վազքը, այնքան շատ և առաջ թեքվում իրանը. վազողի իրանն ամենամեծ
 թեքումն ունենում է կարճ հեռակայության վազքի ժամանակ : Վազքը պետք
 է ընթանա առանց ուղղահայաց տատանումների : Անկախ վազքի հեռակա-
 յությունից, վազողի մարմնի բոլոր մասերը միատեսակ մասնակցում են
 ընդհանուր աշխատանքին :

ԿԱՐՃ ՀԵՌԱԿՍՅՈՒԹՅԱՆ ՎԱԶՔ

Կարճ կամ սղրինտերական վազքի ստիլը կարելի յե բաժանել յերեք
 հիմնական մասի՝ ստարա (սկզբնակետ), վազք հեռակայության վրա, և Ֆի-
 նիշ (վերջնակետ) :
 Ամենալավագույն ստարտը համարվում է ցածր ստարտը, վորը բաղկա-



Մարտի ճիշտ դրությունը «ուշադրություն» հրամանի ժամանակ :
 Ավտարիացի Կերը :

յաճ և յերեք հիմնական գրությունից: Առաջին ձեռ (նկար 1) ցույց և տալիս վազոզի գրությունը ստարաի ժամանակ: Նախ քան ստարաի կանգնելը վազոզը պատրաստում և իրեն համար ստարաային փոսիկներ: Փոսիկներ պատրաստվում են վոտքերի հրման հարմարության՝ ավելի ճիշտ հենման համար: Առաջին փոսիկը փորվում է 15—30 սանտիմետր ստարաի գծից դեպի հետ, վոտքի ներքանի մեկ քառորդից մինչև կեսի խորությամբ, առաջին պատն աղեղնաձև և խոկ հետինն ուղիղ: Յերկրորդ փոսիկը պատրաստվում է վոտքի սրունդի յերկարությամբ, այնպես վոր, յերկրորդ վոտքի ծունկը գտնվի առաջին վոտքի հենման մոտ: Փոսիկները պետք է տեղավորվեն ստարաին ուղղահայաց գծի աջ և ձախ կողմերը, այնպես վոր իրենց ամերով չոչափվեն գծին:

Ստարաի տեխնիկան կայանում է նրանում, վոր վազոզի մարմինն արագ ուղղվի և առաջ ընկնի, կաղմելով մոտավորապես 30—45 աստիճան անկյուն (տես ձև 4-րդ): Դրան կարելի չէ հասնել ձեռքերը գետնից արագ հետ բարձրացնելով, հետևի ձախ վոտքը գետի վեր նետելով և աջ վոտքը ուղղելով:

Մարմնի առաջ ընթանալն արագացնելու համար, անհրաժեշտ է առաջին քայլը անել շատ կարճ, վոր ավել յերկու ներքան, հաշված ստարաի վր-



Ստայերական հողակայության վազոզի տիպիկ շարժումները (Ստեհենբուրգ).

ծից: Վազողը վորոչ թափ ստանալով, յեռանդուն կերպով պահպանում է այն, վոտքերի և ձեռքերի աշխատանքով (տես ձև 5 և 6):

Կարճ վազքի ժամանակ, վոտքերի աշխատանքը կայանում է ազդերի (ծնկների) արագ բարձրացման ու իջեցման մեջ. այն ժամանակ, յերբ մարմինը թեքված է դեպի առաջ (մարմնի ծանրության կենտրոնը գտնվում է հենման տարածությունից դուրս՝ վոտածայրերից առաջ), ծնկները բարձր դիրքով առաջ տանելը, մեծացնում է քայլը և պահում մարմնի հավասարակշռությունը: Ազդերի վեր բարձրացման ժամանակ, սրունդը հնարավոր չափով մոտենում է ազդրին, կազմելով սուր անկյուն: Ազդրն ողում գտնվելու միջոցին, սրունդը բացվում է ու կազմում ուղիղ անկյուն, ներքանը վոտքի տվյալ դիրքում, սկզբում բարձրանում է մատներով դեպի վեր և կըտրուկ շարժումով իջնում գետին: Ձեռքերը հարվածանման շարժումներով ողնում են հրում կատարող վոտքի ուղղվելուն:

Նկարագրված շարժումների ձևը 200, 300, 400 մետր հեռակայության վազքի ժամանակ վորոչ չափով փոփոխվում է: Այդ հեռակայության վազքերի ժամանակ մարմինն ավելի ուղիղ է պահվում, քայլերը լայնանում են Ձեռքերի աշխատանքը ավելի հանգիստ բնույթ է ստանում:

Կարճ հեռակայության վազքի Ֆինիչն սկսվում է 20 մետր տարածու-



Ամերիկացի Գադոկի իդիալական սառաը սպրինտերական վազքի ժամանակ:

թյունից մինչև ժապավենը և վերջանում է յերբ վազողի մարմինը նետվում է ժապավենի վրա: Ժապավենի վրա նետվելու համար պատրաստվում են յերեք մեար տարածությունից. վազողը ժապավենին մոտենալիս ուժեղացնում է մարմնի թեքումը և վտաքերով կարուկ հրումներ անելով, առաջ է նետում կուրծքը, միաժամանակ հետ մղում ձեռքերը: Հայտնի ամերիկական վազող Պադդակը Ֆինիչին նետվելիս կատարում է յերկար թռիչք:

ՄԻՋԻՆ ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՉՔ

Միջին կամ միտակալարեկերական վազքը յուր շարժումների տեխնիկայով հանդիսանում է յերկար ու կարճ հեռակայության վազքերի մեջ ընկնող աստիճանը: Միջին հեռակայության ստիլի աչքի ընկնող տարբերությունը յերկար և ելաստիկ քայլն է, վուրին կարելի յե հասնել, յեթե սրունդները բանալով վտաքերը ուժգին թափով առաջ նետվեն: Մնկները նկարագրված քայլի զեպքում զուրս են բերվում և ավելի առաջ են նետվում, քան վերև: Ներբանը, բոլոր մատերի վրա, փափուկ դրվում է զետին: Մարմնի թռիչքն սղում յերկարատև չե և կատարվում է առանց ցատկումների: Ձեռքերն աշխատում են ուսի շարժումներով, արմունկները մարմնի

միջին գծից այն կողմը չեն անցնում և ծալվում են ուղիղ անկյան տակ: Վազքի ժամանակ իրանը գոտկատեղում քիչ հետ է ծալվում մարմնի առաջ



Կարճ հեռակայության վազողի արդիկ դրությունը վազքի ժամանակ (Վ. Արխայով).

Քերումը պահելու և նրա հետ ընկնելը նախազգուշացնելու համար (տես ձև 3, նկար 2) :

Բացի ձեռքերի վերահիշյալ շարժումից, գոյություն ունի այսպես կոչված ձեռքերի բարձր տեսակի աշխատանք, վոր գործ են անում անգլիական և ամերիկյան վագոդները, սրանց արժուենկները մոտենում են մարմնին և ավելի շատ են ծալվում (տես 2-րդ սխեման) :

ՅԵՐԿԱՐ ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՉՔ

Հակառակ կարճ և միջին հեռակայության վազքերի, վորոնք կատարվում են վոտամատերի վրա, յերկար կամ ստայերական հեռակայության վազքը կատարվում է ամբողջ ներբանով : Վոտքի ամբողջ ներբանը գեանին գնելով, տնտեսվում է վազքի մկանների աշխատանքը : Յերկար հեռակայության համաշխարհային վագոդներ—ԽԱՆՆԵՍ, ԿՈՂԵԽՄԱՅՆԵՆ, ՆՈՒՐՄԻ և մյուսները գործադրում են վերահիշյալ ստիլը :

Ստայերական վազքի ժամանակ շարժումներն ավելի հանգիստ են ու թեթև և նման սովորական քայլվածքի բնական շարժումներին : Ստայերական վազքի ժամանակ վոտքերը գեանից շատ չեն բարձրանում : Վոտքերը

նախ քան գեանին դնելը, ուղղվում են ծնկում, գետ դրվում է կրունկը և ապա ամբողջ ներբանը : Մարմինն առաջ տանելու ժամանակ, գեանին դրած վոտ-

2472-60



Հայանի ֆինական ստայեր Նուրմիլի ֆինի շը

15100-57

քը ծնկից ծալվում է և մարմնի ծանրության կենտրոնն այդ վուղի վրա
բնկնելուց հետո՝ ուղղվում է և վազքի ուղղությամբ թեթև հրումն կատա-
րում: Ձեռքերն ուժեղ ծալվում են արժուենկներից և հանգիստ շարժվում
ուսերի հոգերում, ավելի առաջ շարժվելով դեպի կուրծքը: Իրանն պահվում
է ուղիղ՝ առանց հետ թեքելու:

ԱՐԳԵԼԱՎԱԶՔ

Արգելքների վրայից վազքի ներկայիս գործադրվող ստիլը կրում է
ամերիկյան կոչումն: Առաջին անգամ այս ստիլը գործադրել է
ԿՐԵՆՑԼԵՅՆԸ: Անգլիական հին ստիլի նկատմամբ վերջինս ունի մեծ տեխ-
նիկական առավելություն: Անգլիական հին ստիլը ներկայացնում է ցատկու-
մի և վազքի միացումն, վորն արգելքի վրայով թռիչքը բարձր և տեղական
է դաձնում: Ժամանակակից ամերիկյան (կրենցլեյնյան) ստիլում վերացված
է վերոհիշյալ պահասությունը արգելքի վրայից քայլելու միջոցով, վորի շը-
նորհիվ մարմնի ծանրության կենտրոնը հազիվ բարձրանում է արգելքի բար-
ձրությունից:

Անհրաչեփ է հրումը կատարել արգելքից 1,80 մետր հեռավորության
վրա: Նախքան հրումն, արգելավորն իր վուղերից մեկը մղում է դեպի ար-
գելքը և իրանը կծկելով հնարավորության սահմաններում մոտեցնում է վուղ-



Արգելավազքի (ավազույն տեխնիկ Տոմոնը (Կանադա 14.8) արգել-
քի վրայից թռիչքի մոմենտին:

քին առաջ նետած ձեռքերի հետ միասին : Հրունն կատարող վոտքը , այդ ժամանակ ուղիղ անկյունով ծալվում է և ծունկը առաջ տարվում : Հետադաշում արունդը վեր է բարձրանում համարյա թե կպչում ազդրին : Նկարագրված դիրքում վազողը անցնում է արգելքի վրայից : Գետին իջնելու ժամանակ , նա առաջ ուղղած վոտքով դեպի ցած կտրուկ թափ է կատարում և դետնին չբվելուց հետո շարունակում է վազել : Գետնին պիտի իջնել արգելքից 5-6 ներքան հեռավորության վրա : Արգելքների միջի հեռավորությունը հարկավոր է անցնել վոչ ուշ , քան յերեք քայլով : Միջարգելքային վազքը կատարվում է սպրինտերական ստիլով : 110 մետր վազքի ժամանակ արգելքները դասավորվում են առաջինը՝ ստարտից 13,72 մետրի վրա , մյուս 9 արգելքները աղասավորվում են առաջինից 9,14 մետրական հեռավորության վրա , արգելքի բարձրությունը 1,06 մետր է :

Արգելավազքը կազմակերպվում է նաև 200 և 400 մետր հեռակայությունների վրա : 200 մետր հեռակայության վազքի ժամանակ 10 արգելքները դասավորվում են մեկը մյուսից 18,28 մետր հեռավորության վրա . արգելքի բարձրությունը 76 սանտիմ . է : 400 մետր հեռակայության վազքի ժամանակ արգելքները դասավորվում են՝ առաջինը ստարտից 45 , մյուս 9-ը՝ մեկը մյու-

սից 35 մետր հեռավորության վրա :

Նախքան արգելքային վազքի համար մարզվելը անհրաժեշտ է մարմինը նախապատրաստել այդ ուղղությամբ , դործադրելով հատուկ վարժություններ (տես նախապատրաստական վարժությունների 5-րդ սխեման) :

ԵՍՏԱՅԵՏՅԱՆ (ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿԱՅԻՆ) ՎԱԶՔ

Գոյություն ունի եստաֆետյան վազքի յերկու տեսակ՝ հանդիպող եստաֆետ և չրջանով : Առաջի դեպքում հանձնումը կատարվում է տեղից , յերկրորդ դեպքում չրջանով : Եստաֆետյան վազքի բոլոր տեսակների ժամանակ գործ էածվում միատեսակ եստաֆետ , փայտից պատրաստած , 30 սանտիմետր յերկարությամբ և 4 սանտիմետր հաստությամբ :

Հանդիպող կարճ եստաֆետների ժամանակ խումբը բաժանվում է յերկու մասի . մասնակցողները դեմ առ դեմ շարվում են վազքադժի հանդիպակած ծայրերում : Վազքի ժամանակ բռնում են եստաֆետի մի ծայրից մյուսը մընում է ազատ : Եստաֆետը հանձնելու համար պատրաստվում են , յերբ 15 մետր է մնում հեռակայության վերջանալը : Հանձնողը բռնում է եստաֆետի մի ծայրից , առաջ է մղում այժեռքը և աշխատում եստաֆետի մյուս ծայրը

դնել ընդունողի բուժ մատի և մյուս մասների արանքը: Ընդունողը (տես սխեմա 1-ին նկար 1-ին) կանգնում է ստարտի դժի վրա, աջ ձեռքը ուղղած առաջ իսկ ձախը հետ: Եստաֆետը ձեռքին շփվելուց, ընդունողը սեղմում է նրան իր ձեռքի դաստակով և սկսում վազել: Եստաֆետը ընդունողին հասցնելուն պես, հանձնողը արագ հետ է տանում իր ձեռքը և վազում դեպի ձախ:

Շրջանով եստաֆետը հանձնվում է յերկու կերպ. առաջին՝ եստաֆետը հանձնվում է ներքևից վեր (տես սխեմա 1-ին նկար 2-րդ), յերկրորդ՝ վերևից ներքև (տես սխեմա 1-ին նկար 3-րդ): Թե առաջին և թե յերկրորդ դեպքում, հանձնումը կատարվում է 20 մետր տարածության վրա:

ՎԱԶՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռքերի աշխատանքը գաճազան հեռակայության վազքի ժամանակ.

ՍԽԵՄԱ 2-Բ

Նկար 1. Ձեռքերի շարժումը յերկար հեռակայության վազքի ժամանակ: Արմունկները ծալված են ուղիղ անկյան տակ, ձեռքերը ղաախվ կերպով աշխատում են կողմերից դեպի ներս:

Նկար 2. Միջին հեռակայության վազքի ժամանակ ձեռքերի ճիշտ շարժումը: Արմունկների ծալվածքը բուժ անկյուն է կազմում: Ձեռքերը ազատ կերպով միմիանց զուգահեռ շարժվում են քիչ դեպի ներս:

Նկար 3. Ձեռքերի ցածր աշխատանքը: Արմունկների ծալվածքը բուժ անկյուն է կազմում: Ձեռքերը առաջ են շարժվում ուսերից, կատարելով կարճ շարժումներ:

Նկար 4. Այսպես կոչված, ձեռքերի բարձր աշխատանքը միջին հեռակայության վազքի ժամանակ. արմունկների ծալվածքը կազմում է սուր անկյուն:

Ճիշտ հետքերը և վտաքի գետնին դնելը վազքի ժամանակ: Վտաքի ներքանները վազքի շարժման ուղղությամբ մի ուղիղ գծի վրա յեն:

ՎԱԶՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկվող նախապատրաստական վարժությունները նպատակ ունեն ձմեռվա ընթացքում այս կամ այն հեռակայության վազողի ձեռքերի և վտաքերի վարժությունները համաձայնացնել և բացի դրանից պահպանել մկանների ուժն ու ձկնությունը:

Կարճ հեռակայության վազքի ցախապատաստական վարժությունները
ՍԽԵՄԱ 3-ԲԴ

Կարճ հեռակայության վազքի վարժությունները բաժանվում են արագության (նկար 5.) և ուժի (նկար 2 և 3) վարժությունների: Բնական վատ արագությամբ ոժտված մարդու համար առանձնապես մեծ նշանակություն ունի 5-րդ նկարի մեջ ցույց տված վարժությունը:

Նկար 1. Վարժություններ ձեռքերի համար. Ձեռքերը առաջ և հետ տանել աստիճանաբար արագացնելով մինչև լրիվ լարվածության աստիճանը, այնուհետև նույնությամբ դանդաղեցնել ($1/2$ —2 րոպե):

Նկար 2. Կքանիստի վարժություն (8—10 անգամ): Կատարել դանդաղ, յերբ վոտքերը թույլ են, և արագ՝ յերբ վոտքերը ուժեղ են:

Նկար 3. Կքանիստ մեկ վոտքի վոտամատերի և ամբողջ ներքանի վրա: Արագ և դանդաղ կերպով կատարել մինչև 6 անգամ, նկատի ունենալով վոտքերի ուժը:

Նկար 4. Վոտքը ծալել և բացել ծնկից: Կատարել սկզբում դանդաղ հետո արագացնել (10—15 անգամ):

Նկար 5. Արագության վարժություններ, ձեռքերի վրա հենվելով

Մարմնի ծանրությունը ընկնում և ձեռքերի վրա: Վոտքերը փոփոխաբար արագ բարձրացնել ու իջեցնել ինչպես վազքի ժամանակ:

Միջին հեռակայության վազքի ցախապատաստական վարժությունները
ՍԽԵՄԱ 4-ԲԴ

Նկար 1. Դայլի լայն բացման վարժություն: Մարմնի ծանրությունը հավասարապես ընկնում և յերկու վոտքերի վրա: Իրանը դանդաղ կերպով իջեցնել և բարձրացնել, վոտքը հետ տանելով և առաջ շարժելու ճանապարհով: Կատարել փոփոխաբար 6—8 անգամ յուրաքանչյուր վոտքով:

Նկար 2. Վոտքերը փոփոխաբար հետ և առաջ նետել ցատկումներով (12—20 անգամ):

Նկար 3. Մարմնի հավասարակշռությունը մեկ վոտքի վրա պահելով մյուս վոտքը ծնկից ծալել և ուղղել (յուրաքանչյուր վոտքը 10—15 անգամ):

Նկար 4. Վարժություններ ներբանների աշխատանքի համար: Մարմինը հրումներով բարձրացնել և իջեցնել վոտամատերի վրա, այս վարժության ժամանակ թեթեվ կերպով ծալել ծնկները: Կատարել յուրաքանչյուր վոտքով 8—15 անգամ:

Արգելավագրի նախապատասխան վարժուրդները

ՍԵՆՄՍ. 5-ԲԴ

Արգելավագրի ճիշտ տեխնիկան մեծ կախում ունի այստեղ հիշված վարժուրդներին հիշատակարարելուց:

Նկար 1. Վազողի դիրքը արգելքի վրա: Ազդրը ուղիղ անկյունով բացված և ու տարված դեպի դուրս: Սրունդն ու ներքանը ծալված են. այս դիրքում իրանը առաջ և հետ ծալել (4—8 անգամ):


Նկար 2. Վոտքը ծնկից ծալած դիրքով ուղիղ անկյան տակ անցկացնել աթոռի վրայից (4—8 անգամ):

Նկար 3. Մեկ վոտքի վրա կանգնած, մյուս վոտքը ծնկից ծալած բարձրացնել արագ կերպով դեպի կողմ, մինչև պարզած ձեռքի ամիսն հասնելը և իջեցնել գետին (8—12 անգամ):

Նկար 4. Վոտքը ուղիղ ծալած արտագցել (առաջ բարձրացնել) հնարյալ ձեռքին չափ վեր մինչև առաջ պարզած ձեռքը (6—10 անգամ):

ԿԱՐՃ ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՋԲ

(60. 00. 200. 40) մետր




Չեզ 1. Վազողի կացութիւնը «Մտարտի» հրամանի ժամանակ: Վտօքի ներքաճները փոսիկներում, մարմնի ծանրութիւնը ընկնում է աջ ձեւի վրա:



Չեզ 2. Մտարտի առաջին մոմէնտը «պատրաստվիր» հրամանից հետո: Չեռքերը զբաժնւն դեանին՝ ուսերի լայնութիւն հաճապար հեռափորութիւն վրա:


Աջ վտօքը հենվում է 2-րդ վտօքի հետեւի պատին, ծոնկը շփվում է ձախ վտօքի ներքանին: Մարմնի ծանրութիւնը հաճապարակեա ընկնում է յերկու վտօքերի վրա, գլուխը պահել բարձր:

Չեզ 3. Ուշադրութիւնը հրաւնից հետո, մարմնի ծանրութիւնը տեղափոխվում է ձեռքերի և առաջ ուղղված վտօքի վրա: Մարմինը բարձրացրած է մինչև հորիզոնական վիճակը, գլուխը պահվում է ուղիղ: Չեռքերի դաստակը դանվում է ստարտի գծի վրա, բութը ուղղած դեպի ներս, Վազողի մարմինը գտնվում է լարված դրութիւն մեջ և սպասումն ազդանշանին:



Չեզ 4. Ազգանշան. ձախ վտարի շեղասակի հրշեմով. մարմինը առաջ և ուղղվում, նույն ժամանակ աջ վտարը դուրս և մղվում դեպի վեր: Չեռքերի յեռանդուն աշխատանքը համապատասխանում և վտարերի գրոթյան: Իրանը ուժեղ թեքված և առաջ:

Չեզ 5. Վազողի գրոթյունը բառարտից 20 մետր հեռավորության վրա: Աջ վտարը բոլորովին ձգված և, ձախը հնարավորության շահի դուրս և բերված ծնկով դեպի վեր: Լավ վազողի ներքանը պետք և լինի մատներով դեպի վեր բարձրացած: Չեռքերը արմունկում ծալված աշխատում են յեռանդուն կերպով և կտրուկ հըրումներով:



Չեզ 6. Նոր բայլ մյուս վտարից: Իրանի թեքումը, ձեռքերի և վտարերի աշխատանքը նույնն և, լինջ վոր նախորդ ձևում:

Չեզ 7. Վազողը ժապավենի վրա նեղակիս: Չեռքերը ուժեղն հեռու ընկած, կտրծքը ամբողջ ուժով առաջ և նեղված. կզակր վեր բարձրացրած:

1888

**ՄԻՋԻՆ ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՎԱՋԲ**


Նկար 2

(800, 1000, 1500, 2000 և 3000

մետր)



Չեկ 1. Բաձր ստարտ, առաջին
վտարը ներկա գեպրում աջը
զոնվում և ստարտի գծի վրա,
յերկրորդը մի քայլ հեռ, իրանը
ուժեղ թեքված և գեպի ներս
ձախ ձեռքը առաջ և բերված:




Չեկ 2. Վաղըի սկիզբը: Չախ
վտարը ծնկից ծալված և առաջ և
բերված. աջը հրման հենարան
ժողովրդի, ուժեղ կերպով ուղղ-
վում և, ներքանը կիսածալ և:
Չեռքը արժանիկից ծալած դուրս
և բերվում քիչ առաջ:

Չեկ 3. Հրման խոնարհ: Աջ վտարը
բուրբուլին ուղղված և, ներքանը
մասնակի վրա, ձախ վտարի ազդրը
դուրս և բերված շատ առաջ, ի-
րանը գոտկատանդում ուղղված և:
կուրծքը դուրս ընկած, աջ ձեռ-
քի արժանիկը, հասնում և կրծքի
մեջ տեղը:



Չև 4. Վազողի մարմնի թռիչքը սկսում: Չախ վոտքի սրունգը ծալված և ուղից անկյունով, աջ վոտքը ձգում և զեպի վեր, մարմնի թեքումը նույնն և ինչ վր 3-րդ ձևում Հնարավոր սահմաններում աջ ձեռքը առաջ և տարվում, իսկ ձա հետ:

Չև 5. Վազողը գեանին շփվելու մոմանտին: Չախ վոտքի սերբանը զիպչում և հողին, աջ վոտքը ծալվում և ծնկից և ալիլի հետ նետվում, իրանի թեքումը նույնն և լնչ վր 4-րդ ձևում: Մարմնի ծանրությունը տեղափոխվում և ձախ վոտք վրա:



Չև 6. Չախ վոտքով հրումն կատարելու սկիզբը: Ներբանը բարձրանում և մատերի վրա, աջ վոտքը առաջ և բաշվում: Չախ վոտքի ծալված լինելու պատճառով, մարմինը բիչ ատ և առաջ թեքվում: Բիչ ծալված ձեռքերը զուգահեռ կերպով ջիեցրած և ցած:

Չև 7. Կայունությունը նման է 2-րդ ձևի կայունության, այն տարբերությունը, վոր առաջ և տարվում աջ վոտքը, իսկ ձախը մղում և կատարում: Իրանը ուղղված և ալիլի բան 6-րդ ձևում: Չախ ձեռքը կիսածալ մղվում և առաջ:

1830
1831

1831
1832
1833

**ՅԵՐԿԱՐ ԶԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՎԱՋԲ**

Նկար 3.

(5000, 10000, 15000, 20000,
25000, 30000, 40200 մետր)



Ձև 1. Վազրի սկիզբը: Այլ վառ-
քը հրումն և կատարումն Ձախը
ուղանելուն ծալված առաջ և
աարվում: Ձեռքերը ուժեղ ծալ-
ված են արմունկներում. աշխա-
տում են քիչ դեպի ներս:



Ձև 2. Վազրի գերքը սղում
ալ վառքով հրումն կատարելուց,
հետո: Այլ վառքը հետ և տարված
և ծալված ծնկում: Ձախը ուժեղ
գուրս նետված:



Ձև 3. Ձախ վառքի կրունգը
չոշափվում և գեանին:



Չեկ 4. Չախ փոսքը ամբողջ ներ-
բանով գետնի վրա չէ. Աջ փոս-
քը շարժվում է գետնի առաջ:



Չեկ 5. Անցողիկ մտենալ:



Չեկ 6. Չախ փոսքով հրուժն կո-
տարելու սկիզբը: Վոսքը բարձ-
րանում է մատները վրա: Աջ
փոսքի ծունկը առաջ տանելով
նոր քայլ է սկսում:




Չեկ 7. Հրուժն ձախ փոսքով:
Շարժումը նման է ձև 1 շարժ-
ման:

1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900


1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

ԱՐԳԵԼՈՎՍՉԳ


Նկար 4
(110. 200 400 մետր)




Ձեկ 1. Վազքի ստիւժ
արգելքի առաջ:



Ձեկ 2. Արգելքի առաջ կտտար-
վող հրման մոմենտը: Իրանը ուժ-
գին առաջ և թեքված: Ձեռ-
քերը բարձրացրած են դեպի վեր:
Տվյալ դեպքում աջ վտարը ուղղ-
վում է իսկ ձախը ծալված ուղիղ
անկյան տակ, առաջանում է դե-
պի արգելքը:




Ձեկ 3. Արգելյալուրի մալմնի դը-
րությունը ողում հրումից հետո:
Մտրմինը թեքվել է դեպի առաջ
ձախ վտարը պարզած: Ձեռքերը
պարզած են արգելքի ուղղու-
թյամբ: Աջ վտարը վորոշ չափով
ծալված է ծնկից:



Ձեկ 4. Արդելը անցնելը: Չախ
 վտարը ուղիղ ձգված է: Աջ վոտ-
 քը ուղիղ անկյուն տակ տարվում
 է դեպի կողմ: Իրանը հնարավոր
 սահմաններում թեքված է մինչ
 հորիզոնական դրուժրունը:

Ձեկ 5. Արդելի վրայից կատար-
 ած թռիչքի վերջը: Ուղիղ ձրգ-
 ված ձախ վոտքը թափով իջեց-
 վում է ցած: Աջ վոտքը ուղիղ
 անկյունով ծալված, ցածր գեբքով
 անցնում է արցելի վրայից: Աջ
 ձեռքը արմունկում ծալված դուրս
 է յեկել առաջ:



Ձեկ 6. Արդելավորի գետին շրփ-
 վելը և վազելի սկիզբը: Չախ
 վոտքը ներքանի ծայրով կպչում
 է դեմնին: Աջ վոտքի ծունկը շտ-
 կվում է: Վոտքերի փոփոխման
 համաձայն աջ ձեռքը շեշտակի
 կերպով հետ է գնացել իսկ, ձախը
 առաջ՝ պահպանելով մարմնի հա-
 վասարակշռու թյունը:

Ձեկ 7. Արգելքների միջև կատար-
 վող վազքի սկիզբը, աջ վոտքով
 կարճ քայլ անկույց հետո:





Սխեմա 1. նկար 3. հստաֆետի հանձնումը վերևից ներքև:




Մխեմա 1. նկար 1. հանձնումը հանդիպողական ևս-
տաֆետի ժամանակ:




Մխեմա 1. նկար 2. ևստաֆետի հանձնումը ներքեվից
վերև:







Սխեմա 2-րդ. ձեռքերի աշխատանքը տարբեր հեռակայության վազքի ժամանակ:



Սխեմա 3-րդ. նախապատրաստական վարժություններ կարճ հեռակայության վազքի համար:



Սխեմա 4-րդ. նախապատրաստական վարժություններ
 վոտքերի համար, միջին հեռակայություն վազքի
 ժամանակ:



Սխեմա 5 րդ. նախապատրաստական վարժություններ
 արգելա վազքի համար:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. 233բ.

Գառվ. 5477

Տիրաժ 2000

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0013888

4853

